



ԳԵՐԱՊԱՏԻՎ Տ. ՎԱՐԴԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐ-ՄԱՀԱԿՅԱՆ



Հունվարի 28-ին լրացավ Գերագույն Հոգեվոր Խորհրդի անդամ և Մայր Աթոռի երիցագույն միաբան գերազնորհ Տ. Վարդան եպիսկոպոսի ծննդյան 80-ի քահանայության 55-ամյակը:

Գերազնորհ Տ. Վարդան եպիսկոպոսի ծննդյան 80-ամյակի և քահանայության 55-ամյակի առիթով, Հունվարի 28-ին, երեքշաբթի երեկոյան, Վեհարանում տրվեց ճաշկերույթ, որտեղ Հորեւլարին շեմ խոսքերով շնորհավորեցին Վեհափառ Հայրապետը, Գերագույն Հոգեվոր Խորհրդի անդամները և միաբան Հայրեր:

Վարդան սրբազանը ծնվել է 1878 թվականին Թրաբերդի (այժմյան Մարտակերտի) Գյուլյաթաղ գյուղում նահապետական քահանայական ընտանիքում: Նրա հայրը եղել է Տ. Հովհաննես Քահանան, նույն շրջանում պաշտոնավարած:

Ահա այսպիսի ընտանիքում հասակ է առել և դաստիարակվել սրբազանը: Նա մանկական տարիքից մեծ ձգտում է ունեցել Հովհաննես դառնալու:

Սրբազանը իր նախնական կրթությունն ստացել է Կուապատ գյուղի դպրոցում:

18 տարեկան հասակում ընդունվում է Շուշի քաղաքի Ղարաբաղի թեմական դպրոցը, միջնորդությամբ Մակար արքապիսկոպոս Բարիսուդարյանի: Հաջողությամբ ավարտելով դպրոցի դասընթացը, նշանակվում է Քանյաթաղ գյուղի դպրոցի ուսուցիչ:

1904 թվականի հոկտեմբերի 31-ին ձեռնադրվում է քահանա՝ Ղարաբաղի առաջնորդ Գրիգորիս արքապիսկոպոս Գառնակերյանի ձեռամբ, և պաշտոնավարում Հյուսիսային Կովկասի Գրողնի քաղաքում, միաժամանակ դրավագիով նաև ուսուցչությամբ:

Տ. Վարդան քահանան գործում մասնակցություն է բերում նաև հասարակական-սամբռիրական աշխատանքների կազմակերպմանը: Գրողնի պաշտոնավարում է մինչև 1929 թվականը:

Այնուհետև Տ. Վարդան քահանան տեղափոխվում է Բաքու, որ պաշտոնավարում է Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում մինչև 1952 թվականի հունվարի 8-ը: Սույն թվականին էր, որ որպես այրիացյալ քահանա, Ս. Էջմիածնում ձեռնադրվում է վարդապետ և նշանակվում Թիգրիսի Հայոց Ս. Գևորգ եկեղեցու վանահայր:

1954 թվականին, երկարատև և ազնիվ աշխատանքների համար, երջանկահիշատակ Գևորգ Զ Կաթողիկոսից ստանում է ծայրագույն վարդապետության աստիճան և նշանակվում նոր-Նախարարենի և Հյուսիսային Կովկասի առաջնորդ: Այդ պաշտոնով որպես պատվիրակ մասնակցում է 1955 թվականի սեպտեմբերի 25-ին կայացած Աղգային-

եկեղեցական ժողովին, և նորին Ս. Օծություն
Տ. Տ. Վազգեն Ա Կաթողիկոսի ընտրության
առթիվ, նորոնտիր Վեհափառ Հայրապետի
բարեհաճ Հոգատարությամբ, հոկտեմբերի
6-ին արժանանում է եպիսկոպոսական աս-
տիճանի: Գնահատելով սրբազնի երկար-
ամյա գործունեությունը և Հայ Ազգային ծ-
կեղեցու մատուցած ծառայությունը, Ազ-
գային-եկեղեցական ժողովը նրան ընտրում
է Գերագույն Հոգմոր Խորհրդի անդամ:

1955 թվականին Վարդան սրբազնը, որ-
պես Մայր Աթոռի պատգամավոր, մեկնեց
Անթիվաս՝ մասնակցելու համար Կիլիկիայի
կաթողիկոսական ընտրության, և ապա Վե-
հափառ Հայրապետին ընկերացավ մինչև Ե-
փիպտոս, որտեղ մասնակցեց 1956 թվակա-
նի մարտ ամսում կայացած Կահիրեի Եպիս-
կոպոսական ժողովին:

Այնուհետև, Վեհափառ Հայրապետի հա-
վանությամբ, Վարդան սրբազնը մասնակ-
ցեց 1956 թվականի ապրիլ ամսում Մոսկ-
վայում կայացած Համաշխարհային կրոնա-
կան խորհրդակցության՝ որպես ներկայա-
ցուցիլ Մայր Աթոռ Ս. էջմիածնի: Ապա
սրբազնը անցավ Թբիլիսի՝ առաջնորդա-
կան պաշտոնի, մինչև 1957 թվականի փե-
տրորվար ամիսը, որից հետո՝ իր ծերության
և առողջության պատճառներով կանչվեց
Մայր Աթոռ և անցավ հանգստյան թոշակի:
Թայց գերաշնորհ Տ. Վարդան սրբազնը,
ընայած իր առաջացյալ տարիքին, մասնակ-
ցում է միաբանական կյանքին և Գերագույն
Հոգմոր Խորհրդի աշխատանքներին:

Գերապատիվ Տ. Վարդան Եպիսկոպոսին
ցանկանում ենք խաղաղ ծերություն:

